Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի 2009 թվականի մարտի 25-ին ժամը 15^{00}–ին կայացած նիստի

Արձանագրություն N 4

ՕՐԱԿԱՐԳ

1. Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի պայմանների ապահովման գործընթացի մասին։

2. Հաշմանդամների զբաղվածության խնդիրների, իրականացվող ծրագրերի և նախատեսվող միջոցառումների մասին։

3. “Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին” ՄԱԿ-ի Կոնվենցիայի վավերացման հետ կապված հարցերի մասին։

4. Այլ հարցեր։

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ

Ա. Համբարձումյան՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի նախագահ

Հանձնաժողովի անդամները՝

Հ. Դարբինյան՝ ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ

Բ. Եսայան՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ

Տ. Հարությունյան՝ ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության գլխավոր մասնագետ

Ա. Ալավերդյան՝ "Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության "Ունիսոն"

հ/կ նախագահ

Ս. Թադեւոսյան՝ "Հույսի կամուրջ" հաշմանդամ երեխաների եւ երիտասարդների իրավունքների պաշտպանություն" հ/կ նախագահ

Հ. Աբրահամյան Հայաստանի հաշմանդամների "Փյունիկ" միության նախագահ

Ա. Մկրտչյան՝ " Սկարպ" առողջական կենտրոն" հ/կ նախագահ

Լ. Ներսիսյան՝ " Աստղիկ" հաշմանդամ երեխաների ծնողների ասոցիացիա"
հ/կ նախագահ

Ջ. Բաղդասարյան՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հացերի նախարարության
աշխատակազմի հաշմանդամների եւ տարեցների հիմնահարցերի վարչության պետ
/հանձնաժողովի քարտուղար/

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի անդամների առաջարկությամբ նիստին հրավիրված էին նաև՝

Ռ. Բալասանովա՝ ՀՀ ֆինանսների նախարարության բյուջետային ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչության գլխավոր մասնագետ, նախարարի առաջին տեղակալ Պ.Սաֆարյանի առաջարկով

Ց. Խաչատրյան՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության տարածքային կառավարման վարչության վերահսկողության պետի տեղակալ, նախարարի առաջին
տեղակալ Վ. Տերտերյանի առաջարկով

Հրավիրվածներ՝

Ս.Հարությունյան ՀՀ “Զբաղվածության պետական ծառայություն” գործակալության պետ

Ռ. Օհանյան՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության ճարտարապետության

բաժնի պետ
Գ.Խաչատրյան՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի
վարչության պետի տեղակալ
Մ.Հարությունյան՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի
ճարտարապետության և քաղաքաշինության վարչության
պետի տեղակալ
Հ. Խաչատրյան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության
հասարակայնության հետ կապերի բաժնի պետ
Ա.Մարտիրոսյան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարության
միջազգային կապերի բաժնի պետ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի
հաշմանդամների հիմնահարցերի և հավասար հնարավորությունների ապահովման բաժնի աշխատակիցները։

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի հերթական նիստը, նախագահում էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար՝ հանձնաժողովի նախագահ
Ա. Համբարձումյանը։

Ողջունելով հանձնաժողովի անդամներին՝ նախարարը կարևորեց պետական կառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների համակարգված աշխատանքը հաշմանդամություն ունեցող անձանց հասարակություն ներառելու, նրանց համար հավասար հնարավորություններ ապահովելու, սոցիալական պաշտպանություն իրականացնելու գործում։

Նախարարի առաջարկությամբ հաստատվեց նիստի օրակարգը։

Օրակարգի առաջին հարցի կապակցությամբ լսեցին՝ տիկին Ջ. Բաղդասարյանին։

Նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետ Ջ. Բաղդասարյանը ներկայացրեց հաշմանդամների համար մատչելի պայմաններ ապահովելու գործընթացը բարելավելու նպատակով իրականացվող աշխատանքների ընթացքը և առկա խնդիրները /տեղեկանքը կցվում է/։

Արտահայտվեցին՝

Ա.Ալավերդյանը՝ առաջարկություն արեց քաղաքային տրանսպորտի որոշ միջոցներ տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց կարիքներին հարմարեցնելու հարցի վերաբերյալ։

Գ.Խաչատրյանը հավաստիացրեց, որ նիստում բարձրացված հարցի և առաջարկվող տարբերակների մասին կտեղեկացնի Երևանի քաղաքապետին։

Լ.Ներսիսյանը առաջարկեց, իրականացնել վերահսկողություն սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների ճարտարապետա-հատակագծային առաջադրանքներում հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության պայմանների ներառման նկատմամբ։

Բ.Եսայանը նշեց, որ բոլոր ներառական դպրոցները պետք է ունենան հաշմանդամների համար նախատեսված մատչելիության պայմաններ։

Հ.Դարբինյանը հավաստիացրեց, որ ՀՀ առողջապահության նախարարությունը բոլոր բժշկական կազմակերպությունների ուշադրությունը կհրավիրի հաշմանդամների համար նախատեսված մատչելիության պայմանների ապահովման անհրաժեշտության վրա։

Որոշեցին՝

Հանձնաժողովի անունից պատրաստել գրություն՝

- ՀՀ քաղաքաշինության նախարարություն՝ սոցիալական նշանակության նոր շինություններում հաշմանդամների համար մատչելիություն ապահովելու խնդիրներին հատուկ ուշադրություն հրավիրելու նպատակով։

- ՀՀ կրթության և գիտության նախարարություն՝ որպեսզի կրթական բոլոր հաստատություններում հաշմանդամների մատչելիություն ապահովելու համար համապատասխան պայմաններ ստեղծեն։

- ՀՀ առողջապահության նախարարություն՝ մինչ բժշկական կազմակերպությունների լիցենզավորման կարգում հաշմանդամություն

ունեցող անձանց համար մատչելիությունը ապահովելու պայմանի ներառումը, համապատասխան շրջաբերական նամակ ուղարկել բոլոր բժշկական կազմակերպություններին։

Օրակարգի երկրորդ հարցի կապակցությամբ լսեցին՝ “Զբաղվածության պետական ծառայություն” գործակալության պետ տիկին Ս.Հարությունյանին։

Տիկ. Հարությունյանը ներկայացրեց հաշմանդամների զբաղվածության հիմնախնդիրների և “Զբաղվածության պետական ծառայություն “գործակալության կողմից հաշմանդամություն ունեցող անձանց համար իրականացվող և նախատեսվող ծրագրերը։

Ըստ գործակալության պետի խնդրի լուծմանը մեծապես կնպաստի հաշմանդամների աշխատանքային վերականգնողական կենտրոնների և

սոցիալական ձեռնարկությունների ստեղծումը, ինչպես նաև իրազեկման աշխատանքները
/ տեղեկանքը կցվում է /։

Արտահայտվեցին՝

Ա. Համբարձումյանը՝ նշեց, որ հաշմանդամություն ունեցող անձիք շատ հաճախ չեն դիմում տարածքային զբաղվածության կենտրոն և այդ գործում մեծ անելիքներ ունեն նաև հասարակական կազմակերպությունները։

Ա. Ալավերդյանը ներկայացրեց, որ այժմ ունեն 187 հաշվառված հաշմանդամություն ունեցող անձ, որոնք աշխատանք փնտրող են և գրանցված չեն տարածքային զբաղվածության կենտրոններում։

Որոշեցին՝

- Տարածքային զբաղվածության կենտրոն ներկայացնել Ա.Ալավերդյանի նշած հաշմանդամություն ունեցող անձանց ցուցակը՝ նրանց ուսումնական և այլ ծրագրերում ներգրավելու նպատակով։
- Բոլոր հասարակական կազմակերպությունների ուշադրությունը հրավիրել՝ աշխատանք փնտրող հաշմանդամություն ունեցող անձանց տարածքային զբաղվածության կենտրոններ ուղղորդելու հարցում։

Օրակարգի երրորդ հարցի կապակցությամբ լսեցին՝ միջազգային կապերի բաժնի պետ Ա.Մարտիրոսյանին և "Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության "Ունիսոն" հ/կ նախագահ Ա. Ալավերդյանին։

Ա.Մարտիրոսյանը ներկայացերց “Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին” ՄԱԿ-ի Կոնվենցիայի վավերցման գործընթացը։ Նշեց, որ հարցումներ են կատարվել ՄԱԿ, միջազգային այլ կազմակերպություններ՝ Կոնվենցիայի անվան ճիշտ թարգմանության հետ կապված։ Պատասխաններում միանշանակ նշվել է “հաշմանդամություն ունեցող անձ” հասկացությունը։

Ա.Ալավերդյանը նշեց, որ ՄԱԿ-ի կողմից Կոնվենցիայի ընդունման հիմնական նպատակն է՝ խթանել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները՝ ապահովելով դրանց իրացումը մարդու հիմնարար իրավունքների տեսանկյունից։

“Ունիսոն”, “Հույսի կամուրջ” հասարակական կազմակերպությունների նախագահներ Ա. Ալավերդյանը և Ս. Թադևոսյանը հավաստեցին, որ ոլորտի հասարակական կազմակերպությունները միակարծիք են “հաշմանդամություն ունեցող անձ” հասկացությանը։

Արտահայտվեցին՝

Մ. Վանյանը, Ս. Թադևոսյանը, Հ. Դարբինյանը։

Որոշեցին՝

Ընդունել “ հաշմանդամություն ունեցող անձ” հասկացությունը և նիստի արձանագրությունը ներկայացնել ՀՀ արտաքին գործերի նախարարություն։

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարար,
հանձնաժողովի նախագահ՝ Ա. Համբարձումյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ջ. Բաղդասարյան